ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"15" ապրիլի 2013թ. № 52 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և 72-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 2013 թվականի ապրիլի 11-ի N 01/10.1/608-13 գրության, որոշում եմ՝

1. ՈՒԺը կորցրած ճանաչել 2013 թվականի փետրվարի 8-ի <Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի <Սյունիքի մարզում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության ներթափանցման և տարածման կանխարգելման նպատակով ժամանակավոր հսկիչ կետեր ստեղծելու մասին> N 11-Ա որոշումը:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. ապրիլի 15